



տութիւնը, ազատ արձակուեցան:  
Հայաստանի մէջ, երբ տեղեկացան այս լուրը, որոշեցին ընդդիմանալ թէ՛ մոզերուն եւ թէ՛ հայ նախարարներուն:  
Ուրացեալ նախարարները եւ մոզերը Հայաստան մտան արեւելեան կողմէն,

Արարատ լեռան հարաւէն: Անգղ գիւղաքաղաքի մէջ հաւաքուած էին դիմադրելու տրամադիր եռանդուն խմբակներ Ղեւոնդ Երեցի գլխաւորութեամբ:

Անոնք հալածեցին մոզերն ու պարսիկ պետութեան ներկայացուցիչները եւ երկրէն դուրս վտարեցին:

Յաջորդ տարի, 451 թուականի գարնան, պարսկական բանակը աւելի քան 200.000 հոգիէ բաղկացած, Հայաստան մտաւ ջախջախելու համար ապստամբութիւնը եւ պարտադրելու կրակապաշտութիւնը:

Վարդան Մամիկոնեան իրեն համախոհ իշխաններով եւ թէւ թիկունք կանգնած եկեղեցականներով պարսկական բանակի դէմ ելաւ 66000 կամաւորներով, որոնք համեմատած թշնամիի բանակին ո՛չ անհրաժեշտ զէնքեր ունէին եւ ոչ ալ այդ մեծ թիւը:

Պատերազմի նախօրեակին՝ գիշերը պատարագ մատուցուեցաւ եւ բանակը հաղորդութիւն ստացաւ:

Յաջորդ օրը Վարդանը եւ իր զինակիցները յարձակեցան պարսկական բանակին վրայ:

Վասակը իր գունդով թշնամիի կողմը անցաւ՝ ժառանգելով ուրացողի եւ դաւաճանի տիտղոսները:

Վարդան Մամիկոնեան եւ իր զինակիցները 9 զօրավար եւ 287 զինուոր նահատակուեցան այս պատերազմին, եւ արժանացան հերոսի կոչումին:

Իսկ պարսիկները կորսնցուցին 3544 հոգի եւ 10 զօրավար: Թէեւ պատերազմը մէկ օր տեւեց, բայց շարունակուեցաւ դիմադրական շարժումը եւ բազմաթիւ նահատակներ եղան, որոնց ընդհանուր թիւը հասաւ 1030 հոգիի:

Նահատակ 9 զօրավարներուն անունները եւ իրենց հետ Աւարայրի դաշտի մէջ ինկած զինուորներու թիւը պատմութեան մէջ պահուած է հետեւեալ ձեւով.



Թիւը ուսուստե՛՛ Ռիթս Կարեն-Տիգրիբեն  
Նպարաճարդե՛՛ Ռաֆֆի Բեժեճեան

# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թիւ 6

ՓԵՏՐՈՒՄ Բ. 2018

## ՎԱՐԴԱՆԱՆՔ

5-րդ դարու կիսուն պարսիկ Յազկերտ Բ. թագաւորը, ուզելով իր կայսրութեան մէջ գտնուող քրիստոնէայ ազգերը անջատել բիւզանդական կայսրութենէն, հրամայեց, որ անոնք ընդունին պարսկական գրադաշտական կրօնը՝ կրակապաշտութիւնը: Հայ իշխաններն ու կղերականները օրուան կաթողիկոս Յովսէփ Հողոցմեցիի գլխաւորութեամբ, Աշտիշատ քաղաքին մէջ ժողով մը գումարեցին եւ մերժեցին ենթարկուիլ Յազկերտի հրամանին:

Ժխտական այս պատասխանը ստանալէ ետք, Յազկերտ հայ նախարարները իր երկրի մայրաքաղաք՝ Տիգրան կանչեց եւ

անոնց խիստ սպառնալիքներով երկընտրանքի առջեւ դրաւ՝ կամ ընդունիլ կրակապաշտութիւնը եւ կամ յանձն առնել արքայ, բանտ, մինչեւ իսկ՝ մահը:

Տագնապի մատնուած հայ իշխանները, որոշեցին կեղծ ուրացութեամբ այս թակարդէն դուրս գալ եւ երեսանց ընդունելով կրակապաշ-






8

- 1.- Վարդան Մամիկոնեան 133 զինակիցներով.
- 2.- Խորեն Խորխոռունի 19 զինակիցներով.
- 3.- Արտակ Պալունի 57 զինակիցներով.
- 4.- Տաճատ Գևորգի 19 զինակիցներով.
- 5.- Հմայեակ Դիմաքսեան 22 զինակիցներով.
- 6.- Ներսէս Քաջբերունի 7 զինակիցներով
- 7.- Վահան Գևորգի 3 զինակիցներով
- 8.- Արսէն Ընծայեցի 7 զինակիցներով
- 9.- Գարեգին Սրուանձտեանց 10 զինակիցներով

Պատմութիւնը կը հաստատէ, որ Աւարայրի ճակատամարտը եւ հետեւաբար Վարդանանց նահատակութիւնը տեղի ունեցած է 451 թուականին Մայիսի 26-ին: Իսկ ներկայիս մենք Վարդանանց տօնը կը նշենք Բուն Բարեկենդանի նախորդող Հինգշաբթին:

Պարսիկները թէեւ ընկճեցին հայոց ապստամբութիւնը եւ գրաւեցին Հայաստանը, սակայն չկրցան կրակապաշտ դարձնել հայութիւնը: Անոնց հալածանքներն ու կատարած բռնութիւնները պատճառ դարձան որ հայերը աւելի կառչին իրենց սուրբ հաւատքին: Պարսիկները կորսնցուցին Հայաստանի ժողովուրդին բարեկամութիւնն ու վստահութիւնը եւ չկրցան հասնիլ իրենց նպատակին:

Վարդանանց ճակատամարտով հայերը ցոյց տուին թշնամիին, որ հայ ազգը իր քաջ զաւակներուն արիւնով կը պաշտպանէ իր հայրենիքն ու կրօնքը: Վարդանանց հերոսները դարեր շարունակ ներշնչումի աղբիւր եղած են ազատութեան համար պայքարող մեր ժողովուրդի զաւակներուն:




# ԽԱՂԷՐ

Կրնա՞ս գտնել, թէ ի՞նչ բռնած է այս պզտիկ տղան:



Կրնա՞ս գտնել կերպարին համապատասխանող շուրջ:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած ինը պաղպաղակները:



# ԲԱՐԵԿԵՆՂԱՆԸ

## Յովհաննես Թումանյան

Ժամանակին մարդ ու կին մը կային: Այս մարդն ու կինը չէին հաւնէր զիրար: Մարդը կընոջը կ'ըսէր յիմար, կինը՝ մարդուն, ու միշտ կը կռուէին:

Օր մը այս մարդը քանի մը քիւօ իւղ ու բրինձ կը դնէ, կու տայ ծառային կռակը ու տուն կը տանի:

Կինը կը բարկանայ.

- Ա՛խ, երբ կ'ըսեմ յիմար ես, չես հաւատար, այս-քան իւղն ու բրինձը մէկ անգամէն ինչո՞ւ գնած բերած ես. հորդ հոգեճա՞շը պիտի տաս, թե՞ տղուդ հարսանիքը պիտի ընես:

- Ի՛նչ հոգեճաշ, ի՛նչ հարսանիք, ա՛յ կնիկ, ի՛նչ կը խօսիս. տա՛ր, պահէ, բարեկենդանի համար է:

Կինը կը հանգստանայ, կը տանի ու կը պահէ:

Ժամանակ կ'անցնի, այս կինը կը սպասէ, կը սպասէ, բարեկենդանը չի գար: Օր մըն ալ տան սեմին նստած էր, երբ կը տեսնէ, որ մարդ մը արագ-արագ կ'անցնի փողոցէն: Ձեռքը ճակատին կը տանի ու ձայն կու տայ.

- Եղբա՛յր, եղբա՛յր: Քիչ մը կանգ առ:

Երիտասարդը կանգ կ'առնէ:

- Եղբա՛յր, բարեկենդանը դուն չե՞ս:

Անցորդը կը հասկնայ, որ այս կնոջ խելքը պակաս է, եւ կը մտածէ՝ այո ըսեմ, տեսնեմ՝ ի՛նչ պիտի պատահի:

- Այո՛, ես եմ բարեկենդանը, քոյրի՛կ ջան, ի՛նչ կ'ուզես:

- Կ'ուզեմ ըսել, որ մենք քու ծառաներդ չենք, որպէսզի պահենք քու իւղդ ու

բրինձդ: Յերիք չե՞, որքան պահեցինք... չե՞ս ամչնար... ինչո՞ւ չե՛ս գար ու չես տանիր ապրանքդ:

- Դե՛հ, մի՛ նեղանար, քոյրի՛կ ջան, ես ալ ճի՛շդ ատոր համար եկած եմ, ձեր տունը կը փնտռէի ու չէի գտներ:

- Դե՛հ, ուրեմն եկո՛ւր ու տա՛ր:

Այս մարդը ներս կը մտնէ, իւղն ու բրինձը կը շալկէ, կռակը կը դարձնէ ու կ'ուղղուի իրենց գիւղը:

Երբ ամուսինը տուն կու գայ, կինը կ'ըսէ.

- Հա՛, այդ բարեկենդան ըսածդ եկաւ եւ իր ապրանքները առաւ-տարաւ:

*(Շարունակելի)*

### Բառեր եւ բացատրութիւններ

Հոգեճաշ- մեռելի մը հոգիին հանգիստին համար տրուած ճաշ

Բարեկենդան- Մեծ պահքը կանխող երկու շաբաթները, որոնց ընթացքին մարդիկ ազատօրէն կ'ուտեն ու կը զուարճանան:



# ՆԱՄԱԿ՝ ԱՐՏԵՐԿՐԱՅԻՆ ԷԱԿՆԵՐՈՒՆ

1977-ին անջրպետ ղրկուած երկու անջրպետանաւերը «Վոյեճըր» 1 եւ 2 անցած են ամբողջ արեգակնային դրութենէն: Անոնք մեզի փոխանցած են նկարներ՝ Լուսնթագէն, Երեւակէն, Ուրանոսէն եւ Պոսիտոնէն: Անոնք մեզի կարելիութիւն տուին նաեւ գտնելու այս մոլորակներուն շուրջ դարձող լուսիններ եւ նոյնիսկ գործօն հրաբուխներ Լուսնթագի արբանեակներէն՝ Իոյի վրայ:

Այժմ անոնք կը դեգերին արեգակնային դրութեան սահմաններուն վրայ՝ դառնալով մեզմէ ամենէն հեռու գտնուող շինուած առարկաները:

«Վոյեճըր» 1 եւ 2 իրենց հետ կը փոխադրեն ոսկի ձայնապնակ մը, որուն վրայ արձանագրուած են արտերկրային էակներուն ուղղուած նամակներ: Անոնք կը պարունակեն անասունի ձայներ, մանուկներու կանչեր, տարբեր լեզուներով բարեւելու բանաձե-

ւեր: Արտերկրային էակները պիտի կարենան նաեւ մտիկ ընել Եոհան Սեպասթիան Պախի եղանակները փորկեան թմբուկներու Հարաւային Ամերիկայի սրինգներու կամ պլուզ եղանակի երաժշտութիւն:

Իբրեւ պատկեր՝ անոնք պիտի կարենան տեսնել տեսարաններու, անասուններու, շինութիւններու պատկերներ, ինչպէս նաեւ՝ տարբեր աշխատանքներով զբաղած մարդոց պատկերներ, ինչպէս՝ մարզիկ մը, ծերունի մը, մանրադիտակով աշխատող կին մը, կամ՝ խաղող հաւաքող մը: Մինչ գծագրութիւններ կը ներկայացնեն մարդկային մարմնին կառուցուածքը, մոլորակները, երկրագունդին կառոյցը եւ մեր արեգակնային դրութեան քարտեզ մը:

Սակայն պէտք է քիչ մը համբերել արտերկրային էակներէն պատասխան

մը ստանալու համար: Անջրպետամբեւանները մօտաւորապէս... 40 հազար տարիէն միայն պիտի կարենան հասնիլ աստղի մը մօտ, որուն շուրջ դարձող մոլորակներ կրնան գոյութիւն ունենալ... Եւ որոնք կրնան բնակուած ըլլալ:

*«Եթէ նման քաղաքակրթութիւն մը «Վոյեճըր»ի ճամբան կտրէ եւ կարենայ հասկնալ անոր բովանդակած արձանագրութիւնները, ահա՛ մեր պատգամը»:* Այս ձեռով իր խօսքը կ'ուղղէր 1971-ին Միացեալ Նահանգներու նախագահ Ճիմի Բարթըր: *«Մենք կը փորձենք շարունակել ապրիլ մեր ժամանակներուն մէջ, որպէսզի կարենանք օր մը ապրիլ ձեր ժամանակին մէջ: Մենք կը յուսանք օր մը, մեր հարցերը լուծելէ ետք, կապեր հաստատել աստղահոյլէն ուրիշ քաղաքակրթութեան մը պատկանող հանրութեան մը հետ: Այս սկաւառակը կը ներկայացնէ մեր յոյսը մեր վըճակամութիւնը եւ մեր բարեացակամութիւնը՝ ընդարձակ եւ տպաւորիչ տիեզերքի մը մէջ»:*

